վանօրէից Հայոց Երուսաղէմի, որպէս և զապօրինի վարմունս և զանկանոն գործս ոմանց միաբանից, անհրաժեշտ վարկանեմք, ըստ հայեցողութեան և ընտրութեան Ամենապատուութեանդ և Ազգային Երեսփոխանական Ժողովոյ, առանց յապաղման առաքել լիազօր Ցանձնախումբ մի, կազմեալ ի ձեռնհաս և ի հեղինակաւոր անձանց, յորոց մինն լիցի արքեպիսկոպոս կամ եպիսկոպոս։

Զայս ամենայն առաջարկելով Ամենապատուութեանդ վասն խաղաղացուցանելոյ և կանոնաւորելոյ զմիաբանական կեանս և զգործս Ս. Յակոբեանց վանուցն Երուսաղէմի, որ է գլխաւոր նպատակ Մեր և Ձեր ամենեցուն, յամենայն դէպս թողումք զվախճանական ընտրութիւն միջոցաց, խոնարհանութեան և հեռատես տնօրէնութեան Ամենապատուութեանդ և Ազգային Երեսփոխանական Ժողովոյ։

Օրհնեմք զՁեզ և զամենայն անդամս Ազգային Երեսփոխանական Ժողովոյ, մաղթելով ի Տեառնէ պարգևել Ձեզ կար և զօրութիւն յօգուտ և ի շինութիւն ազգային հաստատութեանց և գործոց Մերոց։

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն և օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 14 փետրուարի 1914 ամի
Թ. 242
ի ս. Էջմիածին։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ օրհնութեան Ուրմիայի Հայոց փոխանորդ Տ. Թորէն վարդապետ Լազարեանի և Պ. Պ. Յ. Շահգեալդեանի, Թ. Աւագեանի, Դ. Մանասերեանի, Ա. Միրզաջանեանի, Յ. Աթանդիլեանի, Հ. Հասրաթեանի, Մ. Յակոբեանի և Աթանդիլեանի անունով, որոնք տեղական Հայ Ժողովրդից հանգանակել են տեղական դպրոցի շինութեան օգտին 8000 ռուբլի։ 29 յունուարի, Թ. 179։

Կոնդակ Տ. Մատթէոս եպիսկոպոսի անունով, որով պատուիրուեց վարդապետութեան մասնաւոր իշխանութիւն տալ Մայր Աթոռի միաբան Տ. Վրթանէս աբեղային։ 30 յունուարի, թ. 185։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Վանայ Առաջնորդական փոխանորդին, որ համաձայն ի Տէր հանգուցեալ Մատթէոս բ. կաթուղիկոսի կարգադրութեան Տփխիսի Հանգանակիչ Մասնաժողովից ստացած և Կ. Պոլսի «Վինը-ը-Պանք»ի պահ տուած 300 օսմ. ոսկին պէտք է Ձեայ անձեռնմխելի ի յիշատակ Վարագայ դպրոցի 50-ամեակի։ 4 փետրուարի, թ. 201։

Նորին Սրբութեան մակադրութեամբ յանձնուեց Ս. Էջմիածնի Սինօդին պ. Զոհրաբ Խրխոռեանի տուած մի հազար ռուբլին, որ նուիրել են հանգուցեալ Զալթիկեանի ժառանգները Դպրոցական Ֆոնդի օգտին։
7 փետրուարի, թ. 205։

Նորին Սրբութեան մակադրութեամբ յանձնուեց Սինօդին Բաբգէն եպիսկոպոսի (Տաճկաստանի) դպրոցական Ֆոնդի օգտին ուղարկած 12 օսմ. ոսկու արժէքը՝ մի հարիւր (100) ռուբլին։ 11 փետրուարի, թ. 216։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ամերիկա Հայոց թեմի Առաջնորդ Տ. Արսէն ծ. վարդապետ Վեհունուն շուտով ներկայացնել Նորին Սրբութեան թեմի մանրամասն վիճակագրական տեղեկագիրը։ 15 փետրուարի, թ. 234։

Կոնդակ Ղարաբաղի թեմի Նուխու փոխանորդութեան Սուլթան-Նուխի գիւղի ծխական հոգաբարձութեան անունով, որով արտօնուեց բանալ տեղական եկեղեցու բակում հայոց եկեղեցական ծխական դպրոց։ 15 փետրուարի, թ. 235։

Կոնդակ Ղարաբաղի թեմի Նուխու փոխանորդութեան Ջուղու գիւղի ծխական հոգաբարձութեան անունով, որով արտօնուեց բանալ տեղական եկեղեցու բակում ծխական դպրոց։ 15 փետրուարի, թ. 236։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ատրախանի կոնսիստորիային, համաձայն Կ. Պոլսի Ամենապատիւ Պատրիարքի գրաւոր դիմումի, անմիջապէս վերադարձնել Տաճկաստան Լօռ գիւղում քահանայագործող Արիստակէս քահ. Թիւլշեանին և Տուապսէի շրջանի Մարաթուգ գիւղում-Ովսէ քահ. Բէօսէեանին, որոնք անցել են Ռուսաստան առանց Տաճկաստանի հոգևոր իշխանութեան թոյլտուութեան և գիտութեան և առաջադրուեց հետևանքի մասին յայտնել նորին Սրբութեան։ 18 փետրուարի, թ. 250։

Կոնդակ օրհնութեան և զոհունակութեան Վսեմափայլ Պօղոս Փաշայ Նուբարի անունով Տաճկա-Հայաստանի բարեգործմանց հարցի բարեյաջող լուծման համար։ 20 փետրուարի, թ. 258։

Շրջաբերական կոնդակներ Ռուսաստանի Հայոց թեմական Առաջնորդների, Ատրպատականի Առաջնորդի և Պարսկա-Հնդկաստանի Հայոց Առաջնորդական Խորհրդարանի անունով, որոնցով պատուիրուեց կարգադրել, որ թեմերի եկեղեցիների պայծառութեան և բարեկարգութեան մասին հոգ տարուի. ինչպէս ապաշխարութեան օրերին նոյնպէս և այսուհետև միշտ հոգևորականները եկեղեցիներում քարոզեն իրենց ժողովրդին՝ սիրել մայրենի եկեղեցին, դպրոցը և աստուածահաճոյ հաստատութիւնները և միշտ յորդորել հեռ կենալ ազգավնաս գործերից և տգեղ քայլերից։ 20 փետրուարի, թ. թ. 260-267։

Կոնդակ օրհնութեան և զոհունակութեան տիկին Տիրուհի Աֆրիկեանի անունով՝ Երևանի թեմի Բէգզադէ գիւղի դպրոցի համար սեպհական շէնք կառուցանելու և այդ դպրոցի պահպանութեան նպաստ տալու առթիւ։ 23 փետրուարի, թ. 277։

Դիւանի շրջաբերական գրութիւններով յանձնարարուեց Ռուսաստանի բոլոր թեմական Առաջնորդներին կարգադրել շուտով ուղարկել ս. Էջմիածնի Սինոդ դպրոցա-

կան Ֆոնդի օգտին մինչև այժմ ժողովուած բոլոր դրամներն ու հանգանակութեան թերթերը։ 24 փետրուարի, թ. թ. 281 286։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Ամենապատիւ Պատրիարքի միջնորդութեան հիման վրայ, Զմիւռնիացի պ. Բերովբէ Թոփալեանի անունով, որը 700 օսմ. ոսկի է նուիրել՝ Աշտիշատի ս. Սահակ Հայրապետի գերեզմանի վրայ մատուռ կառուցանելու համար։ 24 փետրուարի, թ. 291։

Կոնդակ Ղարաբաղի Հայոց թեմի ժամ. կառավարիչ և Շուշու Հայոց հոգևոր թեմական դպրանոցի հոգաբարձութեան նախագահի անունով, որով չորս տարի ժամանակով հաստատուեցին դպրանոցի հոգաբարձութեան պաշտօնումպ. պ. Դաւիթ-Աւան Իւզբաշեանց, Արշակ Ղուկասեան, բժիշկ Սարգիս Համբարձումեան, Դերասիմ Շահնազարեան և Լևոն Վարազեան։ 24 փետրուարի, թ. 292։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էմջիածնի Սինօդին շրջաբերականով կարգադրել բոլոր Ռուսահայոց թեմական Առաջնորդներին, որ առաջիկայ մարտի 22-ին Հայոց եկեղեցիներում դանձանակ շրջեցնեն խուլ և համրերի օգտին և գոյացած դրամն ուղարկեն Սինօդ՝ ըստ պատկանելոյն ուղարկելու համար։ 25 փետրուարի, թ. 296։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Հանգուցեալ Եգոր Զոհրաբեանի պ. պ. կտակակատարներին կարգադրել ուղարկել հանգուցեալ բարերարի կտակագումարի տոկոսներն Ատրպատականի Հայոց հոգևոր թեմական դպրանոցի հոգաբարձութեան։ 25 փետրուարի, թ. 304։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան ուղարկել Վարշաւայի բանտի գրասենեակի միջոցով բանտարկուած մի խումբ Հայ-լուսաւորչականներին, ընթերցանութեան համար, նրանց խնդրի համաձայն, 5 օրինակ Աւետարան և մի քանի այլ կրօնական ընթերցանութեան գրքեր։ 25 փետր., թ. 307։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Մայր Աթոռի մատենադարանապետին պ. Ստեփան Կանայեանի նուիրած Ռ. Մաղաթեանի որդի Համբարձումի հետևեալ ձեռագրերը։ 1. «Ուրբաթագիրք» 1721 թ. 2. «Տօնացոյց» 1720 թ. 3. «Կանոնագիրք» 1849 թ. 4. «Տօնացոյց և Պարզատումար». 5. Կրօնական բովանդակութեամբ բոլորգիր. 6. «Տեսիլ Ս. Գրիգորի» (Լուսաւորչի)։ 7. «Մաշտոց». 8. «Շարական». 9–10. երեք փոր անկազմ կիսատ ձեռագրեր։ 25 փետր., թ. 313։

Դիւանի գրութեամբ պ. Ս. Կանայեանի միջոցով շնորհակալութիւն յայտնուեց պ. Համբարձում Մաղաթեանին վերոյիշեալ ձեռագրերը Մայր Աթոռի մատենադարանին նուիրելու համար։ 25 փետրուարի, թ. 314։

Նորին Սրբութեան գրութեամբ շնորհակալութիւն և գոհունակութիւն յայտնուեց Մոսկուայի Լազարեան ճեմարանի վերատեսուչ պրոֆեսսոր Պ. Գրիգուլեանովին ճեմարանի հրատարակած հետևեալ գրքերը նուէր ուղարկելու համար նորին ս. Օծութեան. 1) Լմինեան ազգագրական ժողովածու, 2) Լազարեան ճեմարանի 75–ամեակը, 3) Ս. Աւետարանը նախնի հայերէն թարգմանութեամբ, 4) Արևելագիտական աշխատանքներ, մասն Ա. և 5) Նախապատրաստական հրատարակութիւն արևելագիտութեան վերաբերեալ, մասն Լե.։ 28 փետրուարի, թ. 325։

Նորին Սրբութեան գրութեամբ շնորհակալութիւն յայտնուեց նոյն Լազարեան ճեմարանի վերատեսուչ պրոֆեսսոր Պ. Գրիգուլեանովին Նորին Վեհափառութեան նուէր ուղարկած իւր հետևեալ աշխատութիւնների համար. 1) Արևելեան Պատրիարքները և 2) Բրիստոնէութեան առաջին երեք դարի միտրոպոլիտները։ 28 փետրուարի, թ. 326։

Կոնդակ Աղթամարայ կաթուղիկոսական նախկին տեղապահ Տ. Յովսէփ եպիսկոպոս Ռշտունու անունով, որին արքութեան պատիւ շնորհուեց՝ նորա 50–ամեայ եպիսկոպոսական Յոբելեանի առթիւ, համաձայն միջնորդութեան

Թուրքիայի Հայոց Ամենապատիւ Պատրիարքի և Կենդրոնական Կրօնական Ազգային ժողովի՝ 28 փետրուարի՝ թ. 327։

Նորին Սրբութիւնը Փարիզի Հայկական Միութեան անդամ-դանձապահ պ. Համբարձում Մելիքեանի անցած փետրուարի 2-ի յայտարարութեան վրայ հետևեալն է մակագրել.

«Այն գրութեան մէջ յիշուած երկու հարիւր իննսուն և հինգ ռուբլի (295 ռ.) կանխիկ դրամը և երկու հազար չորս հարիւր ֆրանկ արժողութեամբ վեց հատ տոկոսաբեր թղթերն իւր կտրոններով (1914 թ. յունուար 1-ից մինչև 1946 թ. յունուարի 1-ը) յատկացնում ենք Մայր Աթոռի Հոգևոր ճեմարանին և յանձնելով ս. Էջմիածնի Սինօդին, պատուիրում ենք պահել իբրև դրամագլուխ յանուն Հոգևոր ճեմարանի»։ 11 փետրուարի՝ թ. 215։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Սինօդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի անցած տարուայ նոյեմբեր 26-ի, № 1834, կոնդակը՝ որոշեց. նոյն կոնդակի պատճէնն ուղարկելով Մայր Աթոռի Դէսպրեան ճեմարանի վարչութեան՝ պատուիրել 1913/1914 ուս. տարում գործադրել ճեմարանի անցեալ 1912/13 ուս. տ. նախահաշիւը՝ վարժոցի վրայ այս տարի աւելի ծախսել 200 ռուբլի և վճարել դպրոցական բաժնի ուսուցիչներից համալսարանաւարտներին 75՝ իսկ ճեմարանաւարտներին 60 ռուբլի դասադին։ 3 փետրուարի՝ թ. 51։

Սինօդը՝ լսելով Մ. Աթոռի Վանական Կառավարութեան զեկուցումը Օշականի վանքապատկան «Դաշտի» աղչայ վարելահողերը վարձով տալու մասին՝ որոշեց. թոյլ տալ Վանական Կառավարութեան յիշեալ «Դաշտի» վարելահողերը տալ Հաջիղարա գիւղացի Տիգրան Մուրադխանեանին կապալով 6 տարի ժամանակով՝ տարեկան 600 ռուբլի